




Ազդարարութեան Trumpet's Sound **փող**

50-ՐԴ ՏԱՐԻ, ԱՄՏՐԱԼԻՄ
ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՅՈԿՏԵՄԲԵՐ 2019



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»
երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույումեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



ԱՍՄ-ի աղօթքի նիւթեր

- Շնորհակալ ենք Յուլիսին Հայաստան այցելած մեր միսիոնարական խումբին եւ բազմաթիւ օրհնութիւններուն համար:
- Աղօթէ՛ք բազմաթիւ հիւանդներու եւ նաեւ անոնց համար, ովքեր հրատապ վիրահատութեան կարիք ունին:
- Աղօթէ՛ք «Ազդարարութեան փող» թերթի յաջորդ թողարկման համար, մինչ կը պատրաստենք թերթի 50 ամեակի յիշատակութիւնը:
- Աղօթէ՛ք Կիւմրի քաղաքի «Ան-կիւնաքար» կենդրոնի շինարարական աշխատանքներուն համար:
- Աղօթէ՛ք մեր բոլոր աշխատակիցներու իմաստութեան եւ զօրութեան համար:
- Շնորհակալութիւն յայտնէ՛ք վարչական խորհուրդի անդամներու եւ անոնց նուիրուածութեան համար:
- Աղօթէ՛ք Սեպտեմբերին Հայաստան այցելող միսիոնարական խումբի ապահով ժամանման համար:

Բովանդակութիւն

Աստուծոյ հետ հանդիպում.	3
<i>Հովիւ՝ Հրաչ Գույումեան</i>	
Աստուծոյ աղերսել.	5
<i>Տոն Սրբոմբր</i>	
Սովսես (2).	9
<i>Փոլ Ուայթինկ</i>	
Աստուծոյ տուած պարգէւները (1) . .	11
<i>Ռէքս Տիրլալ</i>	
Խաղաղութիւն.	13
<i>Քաղուած</i>	
Չարչարանք.	15
<i>Սրիվն Հոլոու</i>	

Կազմի նկարը՝ Կասկատ (Երեւան), ACM 2018թ.

Աստուծոյ հետ հանդիպում

«Քու Աստուածդ դիմաւորելու պատրաստուէ՛» (Ամովս 4:12)

Ամովսը իր ժամանակակից մարդկանց համար շատ խիստ նախագգուշացում մը ունէր. «Քու Աստուածդ դիմաւորելու պատրաստուէ՛» (Ամովս 4:12): Ասիկա ողջ մարդկութեան ուղղուած պատգամ մըն է, քանի որ օր մը բոլորս դէմ առ դէմ պիտի հանդիպինք Աստուծոյ հետ:

Այս յօդուածին մէջ պիտի անդրադառնանք դատաստանի օրը Աստուծոյ հետ հանդիպելուն, սակայն նախ եւ առաջ, եկէ՛ք մտածենք Անոր հետ հանդիպման այլ կերպերու մասին: Հիմա մենք կրնանք Աստուծոյն հանդիպիլ եւ ընդունուիլ Իր կողմէն:

1. Ապաշխարութիւնը, որպէս Աստուծոյ մօտենալու միջոց

«Ոչ թէ ամէն ով որ ինծի «Տէ՛ր, Տէ՛ր» կ'ըսէ, պիտի մտնէ Երկնքի թագաւորութիւնը, հապա անիկա՝ որ իմ Երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ» խօսքը շատ տեղին է:

Շատ մարդկանց կը հանդիպիմ, ովքեր կ'ըսեն, թէ մանկութենէն մկրտուած են, սերունդներէ ի վեր քրիստոնէայ մեծցած են, կիրակի օրերը եկեղեցի գացած են ու պահած են բոլոր ծիսակարգերը: Կը հարցնեն, թէ ապաշխարելու ի՞նչ կարիք կայ, ի՞նչ կը նշանակէ ապաշխարութիւն: Կ'ըսեն, թէ երբեք չեն լսած այդ բառը:

Երբ կը հասկնամ, որ Տէրը կը փնտռէ, թէ որքանո՞վ հնազանդած եմ Իր Խօսքին, այն ժամանակ կը գիտակցիմ, որ խախտած եմ Անոր բոլոր հրամանները, որոնք գրուած են Աստուածաշունչին մէջ: Ես գիտեմ, որ պէտք է ապաշխարեմ: Աստուածաշունչը յստակ է. մենք բոլորս մեղանչեցինք, ուստի բոլորս պէտք է ապաշխարենք:

Երբ կ'ապաշխարենք, կը տեսնենք, որ մեր Աստուածը շնորհալի Աստուած է: Ան փրկութեան դուռ բացած է: Մենք կը փրկուինք շնորհքով եւ ոչ թէ գործերով: Մենք կը փրկուինք Տէր Յիսուսի զոհաբերութեան միջոցով, մեզ համար թափուած Իր թանկագին արեան միջոցով:

2. Մենք կը մօտենանք բժշկութեան համար

Մատթեոսը (14:14) կը պատմէ դէպքի մը մասին, երբ Տէրը եկաւ ծովեզերք ու տեսաւ մեծ բազմութիւն մը, եւ գթաց անոնց վրայ ու բժըշկեց անոնց հիւանդութիւնները: Այսօր նոյնպէս, Տէրը նոյնն է. եթէ ֆիզիկական ու հոգեւոր ապաքինման կարիք ունինք, կարող ենք Իրեն երթալ ու աղաչել. «Տէ՛ր, օգնէ՛ ինձի»: Ես իմ կեանքէս փորձառաբար գիտեմ, թէ քանի՜ անգամներ աղաչած եմ Տիրոջը՝ ըսելով. «Տէ՛ր, օգնէ՛ ինձի», եւ տեսայ Անոր հրաշաքար բժշկութիւնը, որը զարմացուց իմ բժիշկներուս: Երկինքէն, Ան կոչ կ'ընէ մեզի Իրեն հանդիպելու, քանի որ Իր արարչագործութիւնն ենք, որոնք Իր հպման կարիքն ունին: Ան իսկապէս կարող է մեզ օգնել՝ մեր խորհածէն աւելի:

3. Մենք կը մօտենանք գորութեան համար

Երբ իրավիճակները կը վատթարանան, երբ կը թուլանք, երբ յանձնուելու եզրին կ'ըլլանք, երբ ամէն ինչ խաւար է, որո՞ւն կը դիմենք: Արդեօք պատրա՞ստ ենք Իրեն երթալու եւ մեր անձերը Անոր ոտքերուն քով նետելու: Երբ կը զգանք, թէ սպառած ենք մեր ուժերը եւ այլեւս մեր բեռը կրելու կարողութիւն չունինք, Տէրոջմէն օգնութիւն կը խնդրենք ու կը տեսնենք, որ Յիսուսը կրկին ու կրկին կը հասնի մեզ օգնութեան: Մենք պէտք է կարողանանք Դաւիթի պէս ըսել. «Իմ օգնութիւնս Տէրոջմէն է, որ երկինքը ու երկիրը ստեղծեց» (Սաղ. 121:2):

Զարմանալին այն է, որ Ան ոչ միայն կը զօրացնէ մեզ, այլեւ կուտայ մեզ մեր բոլոր պէտքերը: Սողոմոնը գրեց. «Զիս խնճոյքին տունը բերաւ, եւ անոր դրօշը իմ վրաս սեր է»: Եկէ՛ք Իր մօտ ու թոյլ տուէ՛ք, որ Ան առաջնորդէ ու ծածկէ ձեզ Իր սիրով:

Քու Աստուածդ դիմաւորելու պատրաստուէ՛

Այս պատգամը կարեւոր ու կենսական է, քանի որ բոլորս պիտի կանգնինք Աստուծոյ դատաստանին առջեւ: «Վասն զի գրուած է. «Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէրը, որ ամէն ծունկ ինձի պիտի ծռի եւ ամէն լեզու Աստուած պիտի դաւանի: Ուրեմն մեզմէ ամէն մէկը Աստուծոյ հաշի պիտի տայ իր անձին համար» (Հռովմ. 14:11-12):

Մենք մեր Աստուծոյն դիմաւորելու կը պատրաստուինք, քանի որ դատաստանի օր կայ, օր՝ որմէ ոչ ոք պիտի չկրնայ խուսափիլ: Աղա-

մը փորձեց թաքնուիլ, սակայն Դաւիթը հասկցաւ, որ որքան ալ ջանք ընէր, պիտի չկրնար փախչիլ Անոր երեսէն:

«Ո՞ր երթամ քու հոգիէդ եւ քու երեսէդ ուր փախչիմ: Եթէ երկինք ելլեմ, դուն հոն ես, եթէ դժոխքը անկողինս ընեմ, ահա դուն հոն ես. եթէ արշալոյսին թեւերը առնեմ եւ ծովուն վերջի ծայրերը բնակիմ, հոն ալ քու ձեռքդ ինծի պիտի առաջնորդէ ու քու աջ ձեռքդ զիս պիտի բռնէ» (Սաղմոս 139:7-10):

Պատրաստուիլ բառը գործողութիւն կ'ենթադրէ: Մենք պէտք է բան մը ընենք, որպէսզի պատրաստ ըլլանք զինք դիմաւորելու: Մենք պէտք է ապաշխարութեամբ ու հաւատքով Իրեն դարձի գանք:

Եկէք քաջաւերուինք ու մխիթարուինք յիշելով, թէ Աստուծոյ բոլոր զաւակները պիտի հաւաքուին Իր ներկայութեան մէջ՝ երկրպագելու Անոր, որուն սիրեցին: Ան է, այն մէկը ով մեզ այսքան օրհնեց ու Իր միաձին Որդուն տուաւ՝ մեղաւորներուս փրկութեան համար:

Արդեօք պատրա՞ստ էք դատաստանի օրուան համար: Արդեօք պատրա՞ստ էք ձեր Աստուծոյն դիմաւորելու:

Հ. Գ.

Աստուծոյ աղերսել

Կարդացէ՛ք Ծննդոց 18:16-33-ը

Մամբրէի վրաններու այցն աւարտեց: Աբրահամի այցելուները իր հիւրասիրութիւնը վայելելէ ետք ոտքի ելան իրենց ճամբան շարունակելու համար: Աբրահամը, որպէս լաւ հիւրընկալ ընկերացաւ ճանապարհին՝ իրենց հետ ըլլալու համար: Այնուամենայնիւ, դէռ բան մը կար, որու մասին Տէրը կ'ուզէր խօսիլ Աբրահամի հետ:

Տէրը հռետորական հարց մը հարցուց. «Միթէ Աբրահամէ պահէ՞մ ինչ որ ընելու եմ»: Տէրոջ հարցի համար երկու պատճառ կար: Առաջին՝ Աբրահամը մեծ ու զօրաւոր ազգ մը պիտի ըլլար, ու երկրի բոլոր ազգերը անով պիտի օրհնուէին: Աստուած Աբրահամին շուտով պիտի

պատմէր, թէ ինչ պիտի ըլլայ այն ազգին, ով մերժեց Իր առջեւ խոնարհուիլ:

Երկրորդ՝ Աստուած կը ճանչնար Աբրահամին (հմր 19): Ասիկա յատուկ նշանակութիւն ունեցող արտայայտութիւն մըն է: Ամովս 3:2-ը երկու ձեւով թարգմանուած է. «Երկրի բոլոր ազգատոհմերէն միայն ձեզ ճանչցայ», եւ «Երկրի բոլոր ազգատոհմերէն միայն ձեզ ընտրեցի»: Այլ խօսքով՝ երբ Աստուած ըսաւ, թէ կը ճանչնայ Աբրահամին, կը նշանակէ, թէ Ան անոր հետ առանձնապատուկ հաղորդակցութիւն ունէր: Աստուած գիտեր, որ Աբրահամ իր որդիներուն ու իրմէ ետքը իր տանը պիտի պատուիրէ Տէրոջը ճամբաները պահել: Այնուհետեւ իր սերունդները արդարութեամբ պիտի գործէին, որպէսզի Աստուծոյ՝ Աբրահամին ըսած խօսքերը կատարուէին:

Տէրը Աբրահամին շուտով պիտի յայտնէր Սողոմոն վերաբերեալ Իր ունեցած մտադրութիւնները: Քաղաքի աղաղակը այնքան մեծ էր եւ անոնց մեղքը այնքան լուրջ, որ Ան որոշեց կատարուածը ամբողջութեամբ զննել ու տեսնել թէ արդեօք իրեն եկած աղաղակին պէս ըրի՞ն, թէ՞ ոչ: Աստուած զննող Աստուած է, ով լիարժէք հետաքննութիւն կ'ընէ նախքան Իր դատաւճիռը կայացնելը: Ան դաշտի քաղաքներուն վրայ դատաստան պիտի չբերէ, եթէ հիմնաւոր պատճառներ գտնուին: Մեր Աստուածը պահի ազդեցութեան տակ չի գործէր:

Երկու հրեշտակները, ովքեր Տէրոջ հետ էին ելան ու դէպի Սողոմ գացին՝ քաղաքի մեղքը քննելու համար, իսկ Աբրահամը Անոր առջեւ կանգնած մնաց: Տէրոջ առջեւ կանգնած մնալը ցոյց կուտայ Աբրահամի եւ Տէրոջ միջեւ եղած մտերիմ յարաբերութեան մասին:

Կարելի է պատկերացնել Աբրահամի խորհուրդները մինչ կանգնած էր Տէրոջ առջեւ: Եթէ Սողոմը կործանուի, ապա ի՞նչ պիտի ըլլար իր եղբոր որդու ճակատագիրը: Տպաւորութիւնն այն է, որ Աբրահամը քաջատեղեակ էր քաղաքի մեղքի մասին, բայց կ'անհանգստանար քաղաքի մէջ գտնուող արդար մարդկանց համար, մասնաւորապէս իր եղբոր որդի՝ Դովտի եւ իր ընտանիքի համար:

Աբրահամի հարցը հետեւեալն էր. «Արդեօք ամբարշտին հետ արդա՞րն ալ պիտի կորսնցնես»: Գուցէ Աբրահամը չէր պատկերացներ, որ քաղաքն այնքան վատն էր, որ բոլորն ալ արժանի էին կործան-

ման: Գուցե քաղաքին մեջ 50 արդար մարդ գտնուէր: Արդեօք Տէրը 50 արդար մարդկանց Սողոմի ամբարիշտներու հետ պիտի կործանէ՞ր: Անշուշտ, Աստուած ամբարիշտներու հետ չի կործանի արդար մարդկանց: Անհաւատալի է սա: Հետեւաբար, Աբրահամը հարցուց. «Միթէ բոլոր երկրի Դատաւորը արդարութիւն պիտի չընէ՞»:

Տէրոջ պատասխանը միանշանակ էր. «Եթէ Սողոմի մէջ յիսուն արդար գտնեմ՝ քաղաքին մէջ, անոնց համար բոլոր տեղը պիտի խնայեմ»:

Գուցե մտածենք, թէ Աբրահամը չափանիշը շատ բարձր դրաւ: Ան արդար մարդկանց թիւը աստիճանաբար իջեցուց, որոնց համար Աստուած գուցէ խնայէր քաղաքի կործանումը: Այս ընթացքին Աբրահամը կը գիտակցէր իր աննշանակութիւնը, եւ որ իրաւունք չունի Ամենակարողէն որեւէ բան պահանջելու: Ան ինքն իր մասին արտայայտեց՝ որպէս հող ու մոխիր: Այսպիսով, քաղաքը խնայելու համար անհրաժեշտ արդարներու թիվը՝ 50-էն իջաւ 44-ի, 40-ի, 30-ի եւ 20-ի: 40-էն 30-ի անցնելու ժամանակ Աբրահամը խնդրեց, որ Տէրը չբարկանայ իր վրայ: Ան կրկնեց նոյն խօսքը 20-էն 10-ի իջնելու ժամանակ, բայց աւելցուց ըսելով, թէ ասիկա իր վերջին խնդրանքն է:

Աբրահամը արդար մարդկանց թիվը 10-ի իջեցուց ու կանգնեց: Հետաքրքրական է, թէ ինչո՞ւ: Գուցէ Աբրահամը կը մտածէր, թէ անհնար է, որ Սողոմի մէջ առնուազն տասը արդար մարդ չգտնուի: Մենք չենք գիտեր Դավտի ընտանիքի բոլոր մանրամասները, բայց գիտենք, որ Դավտը կին ու երկու դուստր ունէր: Մենք նաեւ գիտենք, որ հրեշտակները Դավտին հարցուցին, թէ Սողոմի մէջ ընտանիքի ուրիշ ինչ անդամներ ունէր՝ փեսաներ, որդիներ եւ դուստրեր: Ան պետք է անոնց Սողոմէն դուրս հանէր: Գրուած է, թէ երբ Դավտը խօսեցաւ իր փեսաներուն հետ, անոնք մտածեցին, թէ կատակ կ'ընէ:

Ի՞նչ դասեր կրնանք քաղել այս պատմութիւնէն:

- Աբրահամի՝ 50-էն 10-ի իջնելու մասին պատմութիւնը կարդալով գուցէ մտածենք, թէ ան վստահ չէր, թէ ինչ պետք է խնդրեր: Ասիկա զարմանալի չէ: Յաճախ մենք չենք գիտեր, թէ ինչի մասին պետք է աղօթենք: Ասիկա Հռովմ. 8:26-ի պատգամն է: Երբ չենք գիտեր ինչի մասին աղօթել, Հոգին Ինքը կը բարեխօսէ մեզի համար:

- Աստուած մեզ չի յանդիմաներ շատը խնդրելու համար: Աբրահամի՝ 50-էն 10-ի իջնելու մեկնաբանութիւնները ցոյց կուտան, թէ ան կը խորհէր, թէ գուցէ թոյլատրելիի գիծը անցած էր: Արդեօք Աստուծմէ շատ բա՞ն կը խնդրէր:
- Աբրահամը ակնածանքով կը վերաբերէր Աստուծոյ՝ իր խրնդրանքը ուղղած ժամանակ: Ոչ մէկ փուլին ոչինչ չպահանջեց, քանի որ Տէրոջը կը խնդրէր ողորմութեամբ վարուիլ: Ասիկա մաքսաւորի մոտեցումն էր, երբ տաճար գնաց աղօթելու, ան խնդրեց, որ Աստուած ողորմած գտնուի իրեն՝ մեղաւորին:
- Դատավճիռը հաստատ է, սուրբ Աստուծոյ դէմ բոլոր ըմբոստները պիտի ստանան Անոր արդար պատիժը: Կործանուածներու մէջ էր նաեւ Դովտի կինը: Կարելի է ենթադրել, որ այս կնոջ սիրտը դեռ Սողոմի մէջ էր, իսկական ապաշխարութիւն չկար: Յաւիտենական կորուստ պիտի կրեն բոլոր անոնք, որոնք չապաշխարեցին: Իրենց մեղքերէն դարձի չեկողներու միակ ճակատագիրը յաւիտենական կորուստն է:

Արդեօք Աբրահամի աղօթքը պատասխանուեցա՞ւ: Այո, Աբրահամի սկզբնական մտահոգութիւնը՝ ամբարիշտներու հետ արդարներու կորչելն էր: Անոր փափագն այն էր, որ արդարները խնայվին: Ան չէր գիտեր, թէ իր աղօթքը ինչպէս պիտի պատասխանուէր, բայց պատասխանուեցաւ: Ասիկա յաճախ մեզի հետ ալ կը պատահի: Յատուկ մտահոգութիւն մը ունինք, որ Տէրոջը առջեւ կը բերենք, նոյնիսկ կը խնդրենք, որ Ան որոշակի ձեւով գործէ: Սակայն մեր սահմանափակ մտքերով չենք կրնար տեսնել ամբողջ պատկերը: Մենք չենք գիտեր, թէ Աստուած ինչու թոյլ կուտայ որոշ բաներ պատահին մեզ հետ: Սակայն Ան ամէն բան Իր իշխանութեան տակ կը պահէ, եւ ետին նայելով կը տեսնենք, որ Աստուած մեր պատկերացուցածէն ատելի պատասխանած է մեր աղօթքները:

Մեր կարիքներն ու մտահոգութիւնները աղօթքով կը բերե՞նք Աստուծոյ: Կ'ակնկալենք, որ Ան պիտի պատասխանէ մեր աղօթքները այնպիսի ձեւով, որ Իրեն ամենաշատը փառք կը բերէ:

Տոն Սթորմըր

Մովսէս (2)

Կարդացէ՛ք Ելից 3-րդ գլուխը

4. Աստուած նպատակային կը գործէ

Աստուած Իր զարմանահրաշ գործերը գլխատրապէս կը կատարէ Իր ժողովուրդի միջոցով, ովքեր պատրաստ են ընելու Իր կամքը: Դիտարկենք մեր փրկութիւնը: Մեզմէ շատերը Աստուծոյ ընտանիքին մաս կազմեցին, քանի որ ինչ որ մէկը հնազանդեցաւ Աստուծոյ՝ իրենց ուղղուած ցուցումներուն: Եղան մարդիկ, ովքեր հնազանդեցան ու աղօթեցին ձեզ համար, նաեւ եղան մարդիկ, ովքեր Աւետարանը ձեզ բացատրեցին: Եւ այսպէս շարունակ, մինչեւ որ Աստուծոյ Հոգին գործը աւարտեց Իր ժողովուրդի եւ ձեր միջոցով՝ ձեզ դարձնելով նոր ստեղծագործութիւն մը, Աստուծոյ յաւիտենական ընտանիքի անդամ մը:

Մովսէսի արձագանքը

Մովսէսի ըսածը կանխատեսելի էր: Բայց Աստուած անմիջապէս պատասխանեց իրեն ըսելով. «Ես քեզի հետ պիտի ըլլամ» (հմր 12): Արդեօք սա բաւարար չէ՞: Մենք կը հաւատա՞նք ասոր: Տէյվիտ Լիվինկսթոնին, Ափրիկէի նախակարապետ միսիոնարին կը հարցնեն, թէ ինչպէ՞ս կրցաւ գոյատեւել Ափրիկէի միսիոնարական կեանքի բոլոր տառապանքները, հիւանդութիւններն ու դժուարութիւնները, որպէս միայնակ միսիոնար. ան ալ պատասխանեց ըսելով. «Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհիս վերջը» (Մատթ. 28:20): Աստուծոյ անհերքելի խոստումը կուգայ Մովսէսին ու նաեւ մեզ. «Ես քեզի հետ պիտի ըլլամ, միշտ, ամէն պարագաներուն մէջ, ցաւի եւ ուրախութեան մէջ: Ես քեզի հետ պիտի ըլլամ»: Աստուած վերահաստատեց Մովսէսին՝ ըսելով. «Այս ըլլայ քեզի նշան՝ որ ես քեզ դրկեր եմ, երբ ժողովուրդը Եգիպտոսէ հանես, այս լեռանը վրայ պիտի պաշտէք զԱստուած» (հմր 12):

Մեծ յայտնութիւնը

13-րդ համարին մէջ կը տեսնենք մեծ յայտնութիւնը: Մովսէսը հարցում մը կուտայ, որը առաջին հայեացքէն կարծես թէ գործնական

հարցում մըն է. «Եւ երբ ըսեն ինծի թէ ի՞նչ է անոր անունը, ի՞նչ ըսեմ անունը»: Մովսէսը Աստուծոյ անձնապէս դեռ չէր ճանչնար: Աստուած Մովսէսին Իր անձը քիչ-քիչ յայտնեց, մինչեւ որ Մովսէսը իր կեանքի վերջին տարիներուն մէջ Աստուծոյ հետ կը խօսէր, ինչպէս բարեկամը բարեկամին հետ՝ «երես առ երես» (Բ Օր. 34:10):

Ուստի, Աստուած Մովսէսին կ'ըսէ. «ԵՄ ԵՄ ՈՐ ԷՆ: Եւ ըսաւ. «Այսպէս պիտի ըսես Իսրայէլի որդիներուն. Չիս ՈՐ ԷՆ դրկեց ձեզի»»:

Սա զարմանալի է: Աստուածաշունչին մէջ Աստուած շատ տիտղոսներ ունի, բայց այստեղ յայտնուած անունը տարբեր է: Այն տիտղոս չէ: Այն կը յայտնէ, թէ իրականութեան մէջ ով է Աստուած. «Ես եմ», կամ «Ես եմ որ էմ»: Այն կը նշանակէ. «Ես յաւիտեան գոյութիւն ունեցողն եմ. Ես եղած եմ, Ես եմ ու յաւիտեան պիտի ըլլամ»: Ան ողջ կեանքի եւ գոյութիւն ունեցող ամէն ինչի աղբիւրն է: Ասիկա ի՞նչ նշանակութիւն ունի մեզ համար:

Յիսուսը ասոր համար եկաւ: Աստուած մեզի եկաւ այնպիսի տեսքով, որ կարողանանք տեսնել ու հասկնալ, այսինքն՝ մարդկային կերպով: Յիսուսը եկաւ, որպէսզի մեզ ցոյց տայ, թէ ինչ կը նշանակէ «Ես եմ»-ը մեր կեանքին մէջ: Ան ըսաւ. «Ես եմ կենաց հացը», «Ես եմ աշխարհի լոյսը», «Ես եմ բարի Հովիւր», «Ես եմ յարութիւնն ու կեանքը»: Այսինքն՝ Յիսուսը ցոյց տուաւ, որ մեր Աստուածը այն ամէնն է, ինչը երբեւէ անհրաժեշտ է մեզ ներկայ և հանդերձեալ կեանքին համար: Սակայն ամենակարեւոր արտայայտութիւնը հետեւեալն է. «Արահամի ըլլալէն առաջ ԵՄ էի» (Յովհ. 8:58): Մովսէսը «Ես եմ»-ի կողմէն կանչուեցաւ ազատելու Աստուծոյ հնագոյն ժողովուրդին, բայց Յիսուսը՝ «Ես եմ»-ը Անձամբ եկաւ մեզ փրկելու ամբողջ յաւիտենականութեան համար:

Ելից գրքին մէջ կը տեսնենք, որ Իսրայէլի յոյսը Աստուած է, ով միշտ գոյութիւն ունի, միշտ հոգատար է եւ միշտ կը գործէ: Մեր յոյսը նոյն Աստուծոյ վրայ է, ով Իրեն յայտնեց մեզ Յիսուսի մէջ եւ Անոր միջոցով մեզի յաւիտենական կեանքի ու մեղքի ստրկութիւնէն փրկուելու խոստումը տուաւ: Ան կը կանչէ քեզ, որ Իրեն դառնաս, ընդունիս Իր ով ըլլալը, եւ իր առջեւ ընդունիս քու ով ըլլալդ, եւ Իր առաջարկած նոր կեանքը՝ փոխարինես հին կեանքիդ հետ:

Փոլ Ուայթինկ

Աստուծոյ տուած պարգեւները

Ա Կորնթացիս 12-րդ գլուխ (մաս 1)

Անցնելով ընդհանուր հաճոյքներէն մէկը ինչ-որ լաւ բան սիրելով ընելու արդիւնքով բաւարարութեան զգացում ունենալն է: Կարելի է, թէ ինչպիսի գործ է այդ. գուցէ ծաղիկ տնկելը, համեղ ճաշ պատրաստելը, շարադրութիւն գրելը, մեքենան վերանորոգելը...: Լաւ գործ մը հաճոյքով կատարելու պատճառով բաւարարութեան զգացում ունենալը շատ իւրայատուկ հաճոյք է: Այդ զգացումը շատ բան կը յայտնէ մեր մասին: Այն նախ եւ առաջ ցոյց կուտայ, թէ ստեղծուած ենք Աստուծոյ պատկերով ու նմանութեամբ: Սա փոքրիկ արտացոլումն է այն զգացումին, որ Աստուած ունեցաւ, երբ երկիրը ստեղծեց: Ան նայեց Իր ստեղծագործութեանը ու տեսաւ, թէ բարի է: Աստուած բաւարարութեան զգացում ունեցաւ իւրայատուկ գործ ընելու եւ այն հաճոյքով ընելու ժամանակ: Քանի որ մենք Աստուծոյ պատկերով ստեղծուած ենք, մեր մէջ ունինք բաւարարութեան զգացում ունենալու ընդունակութիւնը:

Աստուածաշունչին մէջ մի քանի հատուածներ կան, որոնք կը խօսին հոգեւոր պարգեւներու մասին: Ասոնց մասին կը կարդանք Եփես. 4-րդ, Հռովմ. 12-րդ եւ Ա Կորնթ. 12-րդ գլուխներուն մէջ: Այս ամբողջ ուսմունքի հիմքը պարզապէս սա է. Աստուած քեզ շատ աւելին տուած է, քան կը պատկերացնես: Եկեղեցիներուն մէջ յաճախ ականատես կ'ըլլանք, թէ ինչպէս մարդիկ կը կորսնցնեն այդ հիմնալի բաւարարութեան զգացումն ունենալու առիթը: Անոնք իրենք իրենց մասին շարունակ կը խորհին, թէ ոչինչ են, որոնք ոչինչ չեն կրնար ընել: Բայց Աստուած կ'ըսէ, թէ իւրաքանչիւր քրիստոնէայ ունի Իր կողմէն տրուած յատուկ պարգեւ:

Ահա թէ ինչու Պօղոսը հոգեւոր պարգեւներու մասին իր բացատրութիւնը կը սկսի հետեւեալ խօսքով. «Հոգեւոր պարգեւներուն վրայով չեմ ուզեր, եղբայրներ, որ չզիտցող ըլլաք» (Ա Կորնթ. 12:1): Նախքան Սուրբ Հոգիի եւ հոգեւոր պարգեւներու մասին մտածելը կ'ուզեմ նախազգուշացնել ձեզ հետաքրքիր երեւոյթի մը մասին, որը յաճախ տարածուած է մարդկանց մէջ: Այն կը կոչուի՝ պատճառահետեւանքային

արձագանք: Պատկերացուցէ՛ք, որ խումբ մը մարդիկ որոշակի ճշմարտութիւն մը կը վերցնեն ու ծայրայեղ կերպով կ'աղաւաղեն այն: Օրինակ՝ ինչ-որ մէկը կը սկսի խօսիլ միայն Սուրբ Հոգիին մասին, եւ ամէն տեսակի ծայրայեղական ու ոչ սուրբգրային պնդումներ կ'ընէ, թէ Սուրբ Հոգին ինչեր կրնայ ընել ձեր կեանքին մէջ: Այս ծայրայեղական ուսմունքը ինչպիսի՞ ազդեցութիւն կ'ունենայ միւս քրիստոնեաներուն վրայ: Այն կը ստիպէ իրենց արձագանքել, և այդ ուսմունքի դէմ արձագանքը յաճախ կը դրսեւորուի մէկ այլ տեսակի ծայրայեղականութեամբ՝ անտեսել Սուրբ Հոգին եւ անհանգստութիւն գգալ, երբ ինչ որ մէկը Անոր մասին ակնարկութիւն ընէ: Սուրբ Հոգիի մասին իրենց տեսակէտը արձագանքն է մէկ ուրիշի սխալ ու ծայրայեղական ուսմունքին, եւ ոչ թէ Աստուածաշունչի սորվեցուցածին: Մենք պէտք է զգոյշ ըլլանք, որ ճշմարտութեան մասին մեր պատկերացումը հիմնուած ըլլայ Աստուածաշունչի վրայ:

Ումանք Սուրբ Հոգիին կը վիրաւորեն՝ Իր մասին ծայրայեղական եւ ոչ սուրբգրային պնդումներ ընելով, իսկ ուրիշներ՝ ընդհանրապէս Անոր անտեսելու վտանգի առջեւ կեցած են: Այս խնդրի լուծումը Աստուածաշնչային հատուածներուն վերադառնալն է, ու փորձել հասկնալ, թէ իրականութեան մէջ ինչ կը սորվեցնեն մեզ: Մեր ընտրած հատուածի առաջին համարը կ'ըսէ. «Հոգեւոր պարգեւներուն վրայով չեմ ուզեր, եղբայրներ, որ չգիտցող ըլլաք»: Ես կ'ուզեմ, որ իմանաք, թէ ինչպէս Սուրբ Հոգին ձեզմէ իւրաքանչիւրին յատուկ պարգեւ մը կուտայ ծառայութեան համար, որպէսզի թէ՛ դուք եւ թէ՛ միւսները կարողանան օգտուիլ:

Սուրբ Հոգիի ուշադրութեան կենդրոնն ու մտադրութիւնը Ինքն Իրեն, քրիստոնեաներուն կամ եկեղեցին փառաւորելը չէ, այլ՝ Տէր Յիսուս Քրիստոսին (Յովհ. 16:14): Աստուծոյ՝ մեզ տուած պարգեւները մեզ խելացի կամ վերադաս դարձնելու համար չեն, այլ՝ Յիսուս Քրիստոսի Տէր ըլլալը հռչակելու համար: Ան պէտք է փառաւորուի, եւ ոչ թէ մենք: «Յիսուսը Տէր է» երկրպագութեան յայտարարութիւն է: Ծառայութիւնը երկրպագութիւնէն յառաջ կուգայ:

Ձեր ուշադրութեանը կ'ուզեմ ներկայացնել Ա Կորնթ. 12:4–7-էն քաղուած, փոխզիջման չ'ենթարկուող կարեւոր ճշմարտութիւններ:

Չկայ վերստին ծնած քրիստոնեայ մը, ով Սուրբ Հոգիէն գոնէ մէկ պարգեւ ստացած չ'ըլլայ:

Դուք ունիք եզակի եւ յատուկ պարգեւ՝ տրուած Սուրբ Հոգիին կողմէ:

Սուրբ Հոգին, ով անցեալին զօրացուց հաւատքի հզօր տղամարդկանց ու կանանց, նոյն Հոգին է, որ ձեզ պարգեւներ շնորհեց:

Քրիստոնեայ դառնալուդ օրը շատ զարմանալի բաներ պատահեցան.

- Փրկագնուեցաք Քրիստոսի՝ խաչի վրայ կատարած փրկագործութեան շնորհիւ:
- Ձեր մեղքերը ներուեցան:
- Որդեգրուեցաք Աստուծոյ ընտանիքին մէջ, որպէս Իր սիրելի զաւակ:
- Սուրբ Հոգիով կնքուեցաք, եւ Ան եկաւ ձեր մէջ բնակելու:

Ձեր կեանքի մնացած մասը պիտի անցնէք բացայայտելով այդ օրուան մէջ կատարուածի բոլոր հիանալի հետեւանքները: Երբ քրիստոնեայ դարձաք, Սուրբ Հոգին ձեզ հիանալի պարգեւ տուաւ, եւ նաեւ՝ այն օգտագործելու զօրութիւնը: Քրիստոսի Մարմնին մէջ անպիտաններ չկան: Ասիկա կը նշանակէ, թէ հոգեւոր պարգեւ ունենալը բացառիկ քրիստոնեայ ըլլալու նշան չէ, քանի որ բոլոր քրիստոնեաները առնուազն մէկ պարգեւ ունին: Գուցէ չզգաք, որ Սուրբ Հոգիէն յատուկ պարգեւ մը ունիք, բայց դարձեալ, այս պարգեւը կախուած չէ ձեր զգացողութիւնէն, այլ, թէ Աստուծոյ Խօսքը ինչ կ'ըսէ այդ պարգեւի մասին:

Ռէքս Տիրլալ
(Շարունակելի)

Խաղաղութիւն

Ժամանակին թագաւոր մը խոստացաւ մեծ մրցանակ մը տալ այն գծագրիչին, որ կրնար լաւագոյն կերպով պատկերացնել խաղաղութիւնը: Շատ մը արուեստագէտներ մասնակցեցին մրցումին: Սա-

կայն միայն երկու պատահանքներ սիրեց թագաւորը եւ պէտք էր անոնցմէ մէկն ընտրէր, որպէս լաւագոյնը:

Գծագրութիւններէն մէկը կը ներկայացնէր հանդարտ լիճ մը, որը կը ցոլացնէր «խաղաղութիւնը» հսկայ լեռներով շրջապատուած: Վերելը կար կապոյտ երկինքը՝ ճերմակ բուրդի նման ամպերով պատուած: Բոլոր անոնք որոնք տեսան այս նկարը, մտածեցին թէ իրապէս խաղաղութիւնը պատկերացնող կատարեալ տեսարան մըն էր:

Միւս պատահան ալ ունէր սէզ լեռներ, սակայն ասոնք կոշտ էին եւ խոպան: Լեռներուն լանջքին փրփրացող ջրվեժ մը կը սահէր: Ասիկա երբեք խաղաղութիւն չէր պատկերացնէր: Սակայն երբ թագաւորը անոր նայեցաւ, տեսաւ ջրվեժին ետեւ փոքր թուփ մը որ աճած էր ժայռերէն մէկուն խոռոչին մէջէն: Այս մացառին մէջ մայր թռչուն մը բոյն շինած էր եւ ջուրի գօրաւոր յորձանքին մէջտեղը, անհոգ եւ ուրախ նստած էր իր ձագուկներուն հետ:

Թագաւորը այս երկրորդ պատահանը ընտրեց, «բանի որ», բացատրեց ան, «խաղաղութիւն չի նշանակէր տեղ մը ըլլալ որ աղմուկ, նեղութիւն եւ դաժան աշխատանք չկայ: Այլ իրական խաղաղութիւնը այդ բոլորին մէջ ըլլալ եւ դեռ ներքնապէս հանդարտ մնալն է: Այս է խաղաղութեան իսկական իմաստը»:

Սիրելի՛ ընթերցող բարեկամ, արդեօք քու խաղաղութիւնդ ներքի՞ն, թէ՞ արտաքին պարագաներէ կախեալ է: Յիսուս է Խաղաղութեան Իշխանը: Երբ Ան է քու Տէրդ ու Փրկիչդ այն ատեն դուն միշտ հանդարտ եւ խաղաղ պիտի ըլլաս եւ պիտի չագդուիս շուրջդ տիրող դժուարութիւններէն, ձախորդութիւններէն, հիւանդութիւններէն կամ փորձանքներէն:

«Բանի մը համար հոգ մի՛ ընէք, հապա ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով, գոհութիւնով մէկտեղ, ձեր խնդրանքը Աստուծոյ յայտնի ըլլայ: Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն մտքէ վեր է, ձեր սրտերը ու մտքերը Յիսուս Քրիստոսով պիտի պահպանէ» (Փիլիպ. 4:6-7):

Քաղուած՝ «Աւետաբեր ձիթենի» գիրքէն

Չարչարանք

Մեր կեանքի ընթացքին, բոլորս, ամէնայն հաւանականութեամբ, ինչ որ հալածանքներու կամ դժուարութիւններու կը հանդիպինք: Եթէ տակաւին չէք հանդիպած, ապա հնարաւոր է շուտով կը հանդիպիք:

Իհարկէ, որպէս խաչի զինուորներ կարող ենք հալածանքներ ակընկալել: Յիսուս Իր աշակերտներուն ըսաւ. «Եթէ զիս հալածեցին, ձեզ ալ պիտի հալածեն»: Եթէ Քրիստոսի համարձակ վկաներն ենք, ապա կարող ենք Յիսուսի անուան համար չարչարանք ակնկալել, եւ նոյնիսկ ուրախանալ, որ արժանի սեպուեցանք Իր համար ամօթանք կրելու: Լեռան քարոզի մէջ, բազմութեանը քարոզելու ժամանակ Յիսուս ըսաւ. «Երանի՜ անոնց, որ հալածուած են արդարութեան համար, վասն զի երկինքի թագաւորութիւնը անոնցն է»:

Այսպիսով, որպէս Քրիստոսի հետեւորդներ, մենք պատրաստ ենք հալածանքին, իսկ ի՞նչ կ'ըսէք ֆիզիկական չարչարանքներու մասին: Ի՞նչ կ'ըլլայ, եթէ ծանր հիւանդութիւն մը տառապինք, որմէ վերականգնուելու յոյս չկայ: Ի՞նչ կ'ըլլայ, եթէ վնասուածք մը ունենանք, որը մեզ ընդմիշտ անշարժ կը դարձնէ:

Երեսնի մէջ Չոյա անունով Քրիստոսով քոյր մը կ'ապրի, ով կարող է պատասխանել այս հարցերուն: Եւ ոչ միայն պատասխանել, այլեւ ժպիտով պատասխանել:

Երեք տարի առաջ Չոյան ինկաւ եւ կոնքը կոտրեց: Այդ ժամանակէն ի վեր չկրցաւ քայլել ու սահմանափակուեցաւ իր սենեակին մէջ, իսկ աւելի ճիշտ՝ իր անկողնին մէջ:

2019 թուականի Յունիսին, առանձնաշնորհում ունեցայ Հայաստան այցելել ու հանդիպիլ Չոյա քրոջը: Իր սենեակին մէջ անցուցած մի քանի վայրկեանները բաւարար էին, որ տեսնէի այս քրոջ լաւատեսութիւնն ու ուրախութիւնը՝ չնայած իր գտնուած պայմաններուն:

Ակնյայտ էր, որ Չոյան Տէր Յիսուս Քրիստոսին կը ճանչնար, որպէս իր անձնական Փրկիչ: Իր ցուցաբերած ուրախութիւնը պարզապէս



արտացոլանքն էր իր սրտին մէջ ունեցած Քրիստոսով ուրախութեանը: Իհարկէ, ուրախութիւնը Հոգիով լեցուած կեանքի յատկանիշներէն մէկն է, որ Պօղոս կը գրէ Գաղ. 5-րդ գլխուն մէջ: Սակայն հրաշալի էր տեսնել մէկուն, ով թոյլ տուած էր Սուրբ Հոգիին այդպէս ազատ գործել իր կեանքին մէջ:



Նախքան վնասուածք ստանալն ու հաշմանդամ դառնալը, Ջոյան կը սիրէր մեքենայ վարել: Մօտաւորապէս 30 տարի առաջ ան սակաւաթիւ կիներէն մէկն էր, ովքեր վարորդական իրաւունք ունէին եւ մեքենայ կը վարէին Երեսանի փողոցներուն մէջ: Ան պատմեց առանձնապատուկ դէպք մը, երբ ընկերուհիին հետ քաղաքէն դուրս կը վարէր: Ընկերուհին ճանապարհի եզրին գեղեցիկ ծաղիկներ տեսնելով խնդրեց իրեն մեքենան կանգնեցնել, որպէսզի կարողանայ փունջ հաւաքել: Մինչ ծաղիկները կը հաւաքէին, Ջոյան

նոտը ոլորեց ու սայթաքեց՝ կոտրելով նոտքի յօդը: Այս վնասուածքով հանդերձ պայքարեց դէպի մեքենան, մատաւ վարորդի մատատեղը եւ 100 քմ-էն աւելի ճանապարհ անցնելով հասաւ հիւանդանոց:

Ջոյայի համար Երեսանեան փողոցներով մեքենայ վարելը անցեալի պատմութիւն է: Այժմ իր առօրեայ փորձառութիւնները սահմանափակուած են Իր սենեակի սահմաններուն մէջ: Սակայն ան գիտէ, որ իրեն ուրախութիւն ու բաւարարութիւն տուողը Տէրն է, եւ կեանքի ոչ մէկ հանգամանք չի կրնար խլել իրմէ այդ ուրախութիւնը: Ան սաղմոսերգիչի նման կրնայ հռչակել ըսելով. «Կենաց ճամբան ինձի պիտի ցուցնես, երեսիդ առջեւ լեցուն ուրախութիւն կայ, քու աջ կողմդ միշտ հաճութիւններ կան»:

Սթիվն Հոլլու

